

ԱՐՄԻՆԵ ՄՈՒՐԱԴՅԱՆ

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ՀԱՎԱՏԱՐԻՄ ՆԱԽՆՅԱՑ ԱՐՄԱՏՆԵՐԻՆ. ՍՏԵՓԱՆ ԱԼԱԶԱԶՅԱՆ

Տաղանդավոր գրող, հրապարակախոս, հասարակական գործիչ, թարգմանիչ, կինոսցենարիստ Ստեփան Ալաջաջյանը հայ գրականության յուրօրինակ դեմքերից մեկն է:

Նրա կյանքի ուղին նման է այն հազարավոր սփյուռքահայերի կյանքին, որոնք ծնվեցին իրենց ծննդավայրն ու հայրենի տունը կորցրած, եղեռնից մազապուրծ ծնողներից՝ հայ ժողովրդի տարագիր այն գավակներից, որոնք իր իսկ պատկերավոր բնութագրամբ <<օտար երկիր չտարան իրենց հայրենիքից ոչ ինչք, ոչ գանձ, ոչ ժառանգություն, ոչ իրավունք, ոչ էլ նույնիսկ քաղաքացիություն, այլ տարան հուշեր, ազգային սովորույթներ, օրորոցային երգեր, մի քանի մագաղաթ, բայց ամենից շատ տառապանք և հուշ>>:¹

Այս ամենը իրենց գեղարվեստական արտացոլումը գտան ապագա գրողի ստեղծագործություններում, և նա ամբողջ կյանքում հավատարիմ մնաց իր արմատներին, հայրենի մասունքներին:

Բնիկ զեյթունցու շառավիղներից էր Ստեփան Ալաջաջյանը, որի նախնիները դարասկզբին բռնագաղթվել էին Զեյթունից՝ ընկել օտար մի երկիր, բայց երբեք չէին վհասովել: Նրանք արմատներով կապված էին իրենց հայրենիքին, հող ու ջրին, հարազատ ժողովրդին, նրա սովորույթներին ու բարքերին՝ ինչը սրբորեն փոխանցում էին իրենց գավակներին:

Հայրը՝ Եղիան, իր մեջ խտացնում է զեյթունցու հավաքական կերպարը: Արձակագիրը <<Եղեգները չխոնարհվեցին>> վեպում Փառենի կերպարը կերտելիս, անշուշտ աչքի առաջ ունեցել է հոր նախատիպը. <<Փառենը ինքն էլ քայլող պատմություն է, իր ժողովրդի հերոսական, բայց և ողբերգական պատմությունը, նա հաստատուն կռճղ է, հայոց անընկճելի կաղնի>>:

Ալաջաջյանը հայրենիք չտեսած, բայց արյան կանչով, հեռավոր Զեյթունում կորցրած հայրենի տան կարոտով, ծնողների պատմած հուշերը հոգում փայփայելով՝ իր ստեղծագործության մեջ կենդանացրեց իր հայրենիքը, կարևորեց ազգասիրություն, հայրենասիրություն և բառերի վեհ խորհուրդը: Այս գաղափարները մշտապես ուղեկցեցին նրան, դարձան ուղեցույց, դավանանք ողջ կյանքի համար. <<Մեզ հայ պահող ուժը մեր ազգասիրությունն է, մեր հայրենասիրությունը, մենք մեզ ճանաչում ենք այն լեզվով, որ խոսելու են մեր հողի մարդիկ և մեր երկիրն է մեր ինքնաճանաչման վկան, Արարատն է ու

1.<<Սովետական Հայաստան>>ամսագիր, 1981, թիվ 2, էջ 24:

Արագածը, Սևանն է ու Վանա ծովը...» Հայրենիքն այն է, ինչ պատմություն ու անցյալ է կերտում իր հողի վրա ապրող, իր հոգում ծնված ժողովրդի համար: Վայ այն ազգին որ անցյալ չունի, չունի պատմություն»:¹

Անսահման սերը, անմնացորդ նվիրումը հայրենիքին, սուրբ մասունքներին, ազգային ավանդույթներին, գրողն արտահայտում էր տարբեր առիթներով կարդացած իր ելույթներում, տպագրած հոդվածներում: Հայրենասիրության, ազգասիրության վառ դրսևորում էր 1965 թ. ապրիլի 21- ին, Մեծ եղեռնի 50 -ամյակի նախօրյակին, Երևանի պետական համալսարանում ընթերցված նրա խորհմաստ, համարձակ ելույթը տասնամյակներ հետո միայն դարձավ ընթերցողի սեփականությունը:

Ալաջաջյանը որտեղ էլ բնակություն հաստատեց, երբեք չմոռացավ, չուրացավ իր ու իր նախնիների արմատները: Նա մշտապես խորհում էր ազգային թեմատիկայի շուրջ, նրա խորաթափանց հայացքն ուղղված էր դեպի իր արմատները, հարազատ ժողովրդի կյանքը, կենցաղը, բարքերը:

Կորցրած հայրենի վերհուշը, երազի թևերով մշտապես նստած էր նրա հոգու մեջ, ինչպես անանց կարոտ, ինչպես թանկագին մասունք ու այն վերադարձնելու հույսը, հավատը գրողը փայփայեց ողջ կյանքում: Իր նախնիների արյան կանչը, տարագիր հայության կրած տառապանքներն ու մորմոքները, եղեռնի չսպիացող վերքը բույն էր դրել գրողի սրտում և երբեք չլքեց նրան՝ այլ ուղղորդեց այն մեծ հավատով ու լավատեսությամբ, որ «² եղեգները չեն խոնարհվում»:

Զեյթունցի Եղիայից փոխանցված արյան ժառանգությունն է արձակագիր որդուն սովել այն հիշողությունը, որով նա հաստատակամորեն կապվել է նախնյաց արմատներին, հոգևոր արժեքներին:

Արձակագիրը գրականություն էր բերում իր ժողովրդի պատմությունը, նրա քառուղիներով անցած ճանապարհը, որ միաժամանակ տարեգրությունն է՝ ազգի, ժողովրդի, հայի բնավորության նկարագրի: Հայն ուժեղ կամք ունի, անպարտ ոգի և դրանցով էլ դիմակայել է դաժան ճակատագրին: Դրա վառ օրինակը արձակագրի կյանքն էր, ի հեճուկս ճակատագրի իսկական մաքառում, պայքար, համառ ու ուժեղ բնավորության դրսևորում, դիմակայելու ուժ ու լավատեսություն, որն անշուշտ ժառանգել էր իր ժողովրդից:

Ալաջաջյանն ապրեց հարուստ ու բովանդակալից կյանք, որը սովեց իր հրաշալի պտուղները՝ պատմվածքներ, վեպեր, վիպակներ, թարգմանություններ, հրապարակախոսական հոդվածներ, կինոսցենարներ և իրենց տաղանդավոր հեղինակի

1.Մատյան հարզանքի և գնահատանքի,Լոս Անջելես, 1995,էջ11

անունը հայտնի դարձավ հայ ժողովրդի երկու հատվածներում հայրենիքում և սփյուռքում:

Նրա ստեղծագործությունները շաղխված են հայրենի երկրի սիրով ու կարոտով, իր հոգում մշտապես բորբոքվող եղենի մեծ վշտով, աշխարհով մեկ դեզերող հայի ճակատագրով, բայց չմարող հույսով ու հավատով, հայրենասիրության ու ներգաղթի թեմաներով, իր ժողովրդի հարատևության վճռականությամբ ու հայրենիքի վերածնունդով, որոնք իրենց արտացոլումը գտան <<Անապատում>>, <<Փյունիկ>>, << Առանց հայրենիքի>>, <<Եղեգները չխոնարհվեցին>>, <<Անառագաստ նավակներ>>, <<Մաղենն ապրում է Փարիզում>>,<<Ոսկեգույն ծիր կաթին>>,<<Վիրավոր եղջերուն>>, << Ապառաժները արտասվել գիտեն>>, <<Չսպիացած վերք>> և մյուս գործերում:

Ալաջաջյանի խոստովանությամբ, նա իր ստեղծագործությունները արարել է մի գերխնդիր նպատակադրումով, որպեսզի այն փոխանցվի սերունդներին, որ պիտի գան,պիտի ապրեն իբրև հայ ազգային ինքնագիտակցությամբ, ազգային արժանապատվությամբ, իբրև ազգասեր մարդ և քաղաքացի>>:

Հանգամանքներն այնպես դասավորվեցին, որ տաղանդավոր գրողը ստիպված եղավ 1992 թվականին ընտանիքով փոխադրվել Ամերիկայի Միացյալ Նահանգներ և հաստատվել հայաշատ Լոս Անջելես քաղաքում:

Օտար ավերում շատ անվանի հայեր գրեթե անհայտացան անձայր մարդկային օվկիանում, բայց Ալաջաջյանը միշտ հավատարիմ մնաց իրեն, իր կոչմանը, մարդարվեստագետ դավանանքին: Չնայած ծանր հիվանդությանը նա շարունակեց իր ակտիվ գրական գործունեությունը, հանդես եկավ հոդվածներով, էլույթներով: 2001 թվականին նրա դուստր Թերեզան հիմնադրեց <<Առագաստ>> գրական ամսագիրը, որի պատվակալ խմբագիրը դարձավ Ստեփան Ալաջաջյանը: Այն պատշաճ մակարդակով ու բազմակողմանի մեկնաբանությամբ ներկայացնում էր հայ մշակույթը, արվեստը, գրականությունը, քաղաքականությունը :

Յուրաքանչյուր համարի սկզբում Ալաջաջյանի հեղինակած <<Մեր խոսքը>> ծրագրային հոդվածը պատկերացում էր տալիս նրա գրական գեղագիտական հայացքների, հայրենիքի հանդեպ ունեցած անափ սիրո, հայ ժողովրդի հոգևոր- մշակութային արժեքների մասին: <<Առագաստը>> երկար տարիներ հուսալի և հոգևոր կամուրջ դարձավ հայրենիքի ու սփյուռքի միջև, լուսավոր ու պայծառ առագաստ օվկիանոսից այն կողմ, որի լույսով ջերմանում էին տարբեր մայրցամաքներում ապրող հայերը:

Ալաջաջյանը խորապես ճանաչելով իր ժողովրդին, նրա պատմությունը, նրա կրած զրկանքներն ու հերոսական մաքառումները, հավատում էր իր ժողովրդի հավերժությանը,

նրա գալիք հաղթանակներին.<<Ժողովուրդը գիտե վերընձյուղվել, նա ժառանգել է արարելու ոգի և բարոյական գորություն, ժառանգել է <<մեծասքանչ լեզու և ոսկեծղի>> դպրություն>>:1

Ալաջաջյանի բեղմնավոր գրիչը երբեք չդադարեց ստեղծագործել, ծնունդ տվեց հուշագրությունների, որոնք ամփոփվեցին հինգ գրքերում՝ հետևյալ խորագրերով. <<Լուսավորյալ խորաններ>>, <<Եվ ատրուշաններ>>, <<Ճամփեզրի վրա>>, <<Վաթսունականք>>, <<Հորձանուտ>>:

Հուշագրությունները պատգամ լինելուց բացի, լայնախոհ հայացքով կյանքը ճանաչող, իր արմատներին ամուր կառչած մարդու շարադրանք է, ուր գրողը հոգու ողջ բացահայտմամբ իրականության ճշգրիտ արտացոլմամբ անկեղծանում է իր ընթերցողի հետ, ներկա և գալիք սերունդներին վստահում տարիների ընթացքում սրտի գաղտնարանում կուտակված կոհերն ու ապրումները, ժամանակի ու դարաշրջանի ճշմարտացի բնութագրումներն ու գնահատականը:

Իբրև մեծ մտավորականի, գրականության և արվեստի թանգարանի շուրջ 7 – ամյա տնօրենի, ստեղծագործական բեղուն ճանապարհ անցած տաղանդավոր արձակագրի դիմագիծն են ընդհանրացնում բանասիրական գիտությունների դոկտոր Հենրիկ Բախչինյանի խորիմաստ ու գողարվեստական շարադրված տողերը, որ գրվել Ստեփան Ալաջաջյանի 85 – ամյակի առթիվ. << Դուք որպես հայ մարդ, հայ գրող և հայ մտավորական սքանչելիորեն համադրում եք Ձեր մեջ արևմտահային ու արևելահային, հայաստանցուն և սփյուռքահային, օժտված եք լիարժեք ազգային նկարագրով:

Դժվար է պատկերացնել 20 – րդ դարի երկրորդ կեսի հայ արձակը առանց Ձեր բազմաբնույթ գրական ժառանգության: Դուք որպես անառագաստ նավակ մուտք գործեցիք Հայրենիք և հայրենի գրականություն բերելով նոր շունչ և ոգի՝ ազգային և եվրոպական բարձր արժեքների համադրությամբ: Դուք բերեցիք այն հիշատակներն ու զգացողությունները, որ տեսել ու ապրել էիք <<անապատում>>:

Ձեր եղեգների նման չխոնարհվեցիք ոչ դժվարությունների և ոչ էլ օրվա իշխանության ու վարչակարգի առջև: Գեղարվեստական բարձր մակարդակով պատկերեցիք Հայրենիքում և առանց հայրենիքի ապրած և ապրող հայությունը, որը պարտությունից հետո հառնում է Փյունիկի նման:Պատկերեցիք նրա ցավերը, որը կրում էր Ձեր մեջ որպես չսպիացած վերք, և ապա ապա որպես արդեն բազմաառագաստ նավ հայտնվեցիք Սփյուռքի օվկիանում տանելով Ձեզ հետ լուսավորյալ խորաններ և նվիրական ատրուշանների կրակը և միշտ

1.<<Առագաստ>>, թիվ 37, 2005, էջ 2 :

մնացիք Հայրենիքի ու Սփյուռքի ճամփեզրի վրա>>:1

Հայրենիքից հեռու, բայց միշտ ապրում էր հայրենիքով, պաշտում էր Հայաստանը, հայ ժողովրդին, փայփայում ազգային երազներն ու հույսերը:

Տաղանդավոր գրողի, մեծ հայորդու ազգային դիմագիծն են ընդհանրացնում Կապուտիկյանի հետևյալ խոսքերը. << Նա ոչ միայն գրող է, այլ ընկեր է, քաղաքացի է, որովհետև նա հայրենիքի բոլոր իրադարձությունները ապրում է, դրանք լինում են նրա մոտ կենսագրություն, ամենօրյա պայքար և մաքառում, իր կյանքի միջով անցնող ճակատագիր, հերքումի և պատասխանի երևույթ, որոնք նրան դարձնում են մեծ անհատականություն>>:

1. Հոբելյանական հանդիսություն, 2009, 8 փետրվարի նվիրված Ստեփան Ալաջաջյանի 85 – ամյակին:

<<Համայնապատկեր>> հանդես, Լոս – Անջելես, 2012թ. □